2007 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը [1]

2007 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 570.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 565.9 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 105.3%-ով և 97%-ով ապահովել են ՀՀ կառավարության կողմից ճշտված տարեկան ծրագրային ցուցանիշները:

2006 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 29.9%-ով կամ շուրջ 131.4 մլրդ դրամով: Մասնավորապես, 120.4 մլրդ դրամով ավելացել են հարկերը և տուրքերը, 13.6 մլրդ դրամով՝ ոչ հարկային եկամուտները, 3.1 մլրդ դրամով՝ կապիտալի գործառնություններից եկամուտները, իսկ պաշտոնական տրանսֆերտների գծով արձանագրվել է անկում 5.8 մլրդ դրամով: «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 14.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 12.3 մլրդ դրամի դիմաց:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի եկամուտների 84.8%-ը ձևավորվել է հարկային մուտքերի հաշվին: Պետական տուրքը կազմել է բյուջեի եկամուտների 3.8%-ը, ոչ հարկային եկամուտները՝ 6.8%-ը, կապիտալի գործառնություններից եկամուտները՝ 3.4%-ը, պաշտոնական տրանսֆերտները՝ 1.2%-ը:

2007 թվականի ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 483.7 մլրդ դրամ և 103.1%-ով ապահովել տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտներն աճել են 32.1%-ով: Ընդ որում, բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է աճ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային եկամուտների 51.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 248 մլրդ դրամ: Նշված գումարից 154.8 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 93.2 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 49.5%-ով կամ շուրջ 82.1 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են և՛ սահմանին, և՛ ներքին շրջանառությունից գանձվող հարկի գումարները:

---

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

Պետական բյուջեի հարկային եկամուտների 8.6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 41.5 մլրդ դրամ: Մասնավորապես, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 28.6 մլրդ դրամ, որից 12.6 մլրդ դրամը ստացվել է բենզինի և դիզելային վառելիքի, 12.2 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 13 մլրդ դրամ, որից 5.6 մլրդ դրամը գանձվել է տեղական արտադրության ծխախոտի իրացումից: 2006 թվականի համեմատ ակցիզային հարկն աճել է 4.2%-ով կամ 1.7 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում շահութահարկից պետական բյուջեի մուտքերը կազմել են 75.5 մլրդ դրամ կամ հարկային եկամուտների 15.6%-ը: Նախորդ տարվա համեմատ այն ավելացել է 15.6%-ով կամ 10.2 մլրդ դրամով: Ընդ որում, նշված աճը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկությունների վճարումների ավելացմամբ: Նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև մյուս աղբյուրներից ստացված շահութահարկի գումարները, բացառությամբ պետական ձեռնարկությունների վճարումների, որոնք կիսով չափ նվազել են:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է ավելի քան 46.8 մլրդ դրամ՝ապահովելով հարկային եկամուտների 9.7%-ը: Եկամտահարկի հիմնական մասը՝ 43.6 մլրդ դրամ, մուտքագրվել է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներից: Նախորդ տարվա համեմատ եկամտահարկն ավելացել է 32%-ով կամ շուրջ 11.4 մլրդ դրամով: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները, որոնք 9.9 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2007 թվականի ընթացքում հիմնականում ներմուծման աճի հետ կապված՝ աճ է արձանագրվել նաև մաքսային տուրքի գծով: Այն կազմել է 24 մլրդ դրամ՝ 31%-ով կամ 5.7 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Հաշվետու տարում գործունեության առանձին տեսակների հարկումից պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 17.9 մլրդ դրամի հաստատագրված վճարներ, ինչը կազմել է պետական բյուջեի հարկային եկամուտների 3.7%-ը: Նախորդ տարվա համեմատ հաստատագրված վճարներն ավելացել են 18.6%-ով կամ 2.8 մլրդ դրամով: Այն հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առևտրի իրականացման վայր կազմակերպելու, հանրային սննդի ոլորտների, վիճակախաղերի և դրամական շահումով խաղերի կազմակերպման, տրանսպորտային գործունեության համար գանձված գումարների աճով:

2007 թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 10 մլրդ դրամ պազեցված հարկ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 30.8%-ով կամ 2.4 մլրդ դրամով:

Հաշվետու տարում ավելի քան 19.8 մլրդ դրամ են կազմել այլ հարկերը: Մասնավորապես, 9.2 մլրդ դրամ են կազմել բնօգտագործման և բնապահպանական վճարները, 4 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 2.5 մլրդ դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները, շուրջ 3 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները և 1.2 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերն ավելացել են 7.1%-ով կամ 1.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության դիմաց կատարված վճարումներով: Բացի այդ, զգալիորեն նվազել են բնապահպանական և բնօգտագործման վճարները, քանի որ, ի տարբերություն նախորդ տարվա, ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներում «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին ներառվել է ոչ հարկային եկամուտներում, որը կազմել է 4.5 մլրդ դրամ:

2007 թվականին պետական տուրքի գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 21.9 մլրդ դրամ, որոնք ապահովել են տարեկան ծրագրի 110.3% կատարողական: 2006 թվականի համեմատ պետական տուրքն ավելացել է 15.1%-ով կամ շուրջ 2.9 մլրդ դրամով, ինչը 43.6%-ով պայմանավորված է օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքի աճով: Բացի այդ, զգալիորեն ավելացել են նաև պետական գրանցման, գործունեության որոշ տեսակների լիցենզավորման, ինչպես նաև դատարան տրվող հայցադիմումների և գանգատների համար գանձվող տուրքերը:

2007 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները կազմել են շուրջ 38.9 մլրդ դրամ՝ 63.7%-ով գերազանցելով տարեկան ծրագիրը և 53.9%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման գործընթացի արդյունքում գնորդների հետ բացառիկ բանակցությունների վարման իրավունքի դիմաց կատարված վճարմամբ, ինչպես նաև բյուջեների ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխման ու դեպոզիտների դիմաց ստացված մուտքերով, որոնց գծով պետական բյուջեում եկամուտներ չեն նախատեսվել: Նախորդ տարվա համեմատ ոչ հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների, բյուջեների ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխման ու դեպոզիտների դիմաց ստացված մուտքերի, ինչպես նաև իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից պետական բյուջե

մուտքագրված գումարների ավելացմամբ: Մասնավորապես, այլ ոչ հարկային եկամուտների գծով բյուջե է մուտքագրվել շուրջ 27.7 մլրդ դրամ, որը 40.8 %-ով կամ 8 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Հաշվետու ժամանակահատվածում ազատ բյուջետային միջոցների տեղաբաշխումից ստացվել են ավելի քան 4.3 մլրդ դրամ տոկոսավճարներ, որոնք 4 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են շուրջ 1.8 մլրդ դրամ դիվիդենտներ, որոնք 2.7 անգամ (շուրջ 1.1 մլրդ դրամով) գերազանցել են 2006 թվականի նույն ցուցանիշը: Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված գումարը կազմել է շուրջ 3.2 մլրդ դրամ և 48.7%-ով կամ ավելի քան 1 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը, ինչը պայմանավորված է արտաբյուջետային միջոցների մուտքերով:

2006 թվականի համեմատ ոչ հարկային եկամուտների նվազում է նկատվել, մասնավորապես, տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերի գծով, որոնք կազմել են 944.3 մլն դրամ և շուրջ 547.6 մլն դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում կապիտալի գործառնություններից պետական բյուջեի եկամուտները կազմել են 19.1 մլրդ դրամ, որից շուրջ 17.5 մլրդ դրամը ստացվել է պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից (այդ թվում՝ շուրջ 17.1 մլրդ դրամ Երևանի տարածքում գտնվող հողերի վաճառքից) և 1.7 մլրդ դրամը՝ հիմնական միջոցների վաճառքից: Կապիտալի գործառնություններից եկամուտների տարեկան ծրագիրը կատարվել է 90.9%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված մուտքերի աճը կազմել է 19.5% կամ 3.1 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 6.5 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտներ՝ կազմելով տարեկան ծրագրի 89.6%-ը: Նշված ցուցանիշը հիմնականում պայմանավորված է նրանով, որ չի ստացվել Եվրամիության պարենային ապահովության ծրագրի շրջանակներում նախատեսված 3.3 մլրդ դրամը, ինչպես նաև Նիդեռլանդների թագավորության կառավարության կողմից նախատեսված շուրջ 2.2 մլրդ դրամի փոխարեն ստացվել է շուրջ 932 մլն դրամ: Փաստացի մուտքերից ավելի քան 763.1 մլն դրամը տրամադրվել է Ճապոնիայի կառավարության կողմից՝ «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում: Շուրջ 3.7 մլրդ դրամ ստացվել է Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային

Իռլանդիայի միացյալ թագավորության միջև ստորագրված աղքատության հաղթահարման նպատակով բյուջեին աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Շուրջ 579.5 մլն դրամ է տրամադրվել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում բյուջեով նախատեսված մարզային զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով, շուրջ 932 մլն դրամ տրամադրվել է Նիդեռլանդների թագավորության կառավարության կողմից, ևս 560.4 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված դրամաշնորհները 46.9%-ով կամ 5.8 մլրդ դրամով զիջել են 2006 թվականի նույն ցուցանիշը:

2007թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են շուրջ 565.9 մլրդ դրամի ծախսեր, որը կազմում է ծրագրի 97%-ը: Տրամադրված միջոցների 71.8%-ն ուղղվել է ընթացիկ, 24.5%-ը՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, 3.7%-ը՝ զուտ վարկավորմանը:

Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 24.6%-ով կամ 111.8 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի, ծառայությունների ձեռք բերման և տրանսֆերտների ծախսերի աճով:

Ընդամենը ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ընթացիկ ծախսերը, որոնց ֆինանսավորմանն անցած ժամանակահատվածում հատկացվել է ավելի քան 406.4 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 96.9%-ով կատարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 16.5%-ով կամ 57.5 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերի 11.3%-ն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, որը կազմել է 46 մլրդ դրամ: Կառավարության կողմից սահմանված տարեկան ծրագիրը կատարվել է 99.4%-ով: Նախորդ տարվա համեմատ աշխատավարձի գծով հատկացումներն ավելացել են 14.5%-ով:

2007 թվականի ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են ավելի քան 21.9 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 5.4%-ը և ապահովելով ծրագրված հատկացումների 99.9%-ը: 2006 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 10.4%-ով կամ 2.1 մլրդ դրամով, ընդ որում, ավելացել են ինչպես համայնքներին տրամադրված սուբվենցիաները, այնպես էլ ձեռնարկություններին և կազմակերպություններին տրամադրվող սուբսիդիաները:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 10 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 90.9%-ը: Նշված գումարից շուրջ 6.6 մլրդ դրամը հատկացվել է ներքին, իսկ 3.4 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի

սպասարկմանը: Ընդ որում, խնայողություններ են առաջացել ներքին պարտքի սպասարկման ծախսերի գծով, որոնք կազմել են ծրագրվածի 86.9%-ը: 2006 թվականի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 10.3%-ով՝ պայմանավորված ներքին պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 25.1%-ը կամ 102.2 մլրդ դրամ կազմել են ընթացիկ տրանսֆերտները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98.1%-ով: Մասնավորապես, տրանսֆերտային հատկացումներից շուրջ 27.7 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 17.5 մլրդ դրամը՝ թոշակների, 17.6 մլրդ դրամը՝ համայնքներին համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների ֆինանսավորմանը: 2006 թվականի համեմատ տրանսֆերտներն աճել են 15.1%-ով:

Ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը պետական բյուջեից հատկացվել է 226.3 մլրդ դրամ, որը կազմում է պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 55.7%-ը: Կառավարության սահմանած տարեկան ծրագիրը կատարվել է 96%-ով: Նախորդ տարվա համեմատ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերն ավելացել են 18.5%-ով կամ 35.3 մլրդ դրամով:

2007 թվականի պետական բյուջեից շուրջ 138.8 մլրդ դրամ տրամադրվել է կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը՝ ապահովելով տարեկան ծրագրի 96.7%-ով կատարում: 2006 թվականի համեմատ պետական բյուջեի կապիտալ ծախսերն ավելացել են 55.5%-ով կամ 49.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պաշտպանության, կրթության, սոցիալական ոլորտներում, ինչպես նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումների ավելացմամբ:

2007 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից կատարվել է ավելի քան 21.4 մլրդ դրամի վարկավորում, որի գերակշիռ մասը՝ շուրջ 19.6 մլրդ դրամ տրամադրվել է ԼՂՀ-ին: Ավելի քան 145.9 մլն դրամ արտոնյալ վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: Վարկ է տրամադրվել նաև ատոմային էներգետիկայի բնագավառին՝ հայկական ԱԷԿ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի կառուցման նպատակով, որի համար հատկացվել է 717.9 մլն դրամ: Նախկինում տրամադրված վարկերից պետական բյուջե է վերադարձվել 758.8 մլն դրամ, որից շուրջ 54.3 մլն դրամը վճարվել է Վրաստանի հանրապետության կողմից: Արդյունքում զուտ վարկավորումը կազմել է շուրջ 20.7 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 100.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեից զուտ վարկավորումն ավելացել է 29.4%-ով կամ 4.7 մլրդ դրամով՝ պայմանավորված 2007 թվականի պետական բյուջեով ԼՂՀ-ին տրամադրվող միջպետական վարկի գումարի ավելացմամբ և վարկերի վերադարձի նվազմամբ:

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 4.2 մլրդ դրամ հավելուրդով: Ընդ որում, ներքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է -8.4 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից՝ շուրջ 4.2 մլրդ դրամ:

Գանձապետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեն ֆինանսավորվել է 9.2 մլրդ դրամով (թողարկում՝ 40.0 մլրդ դրամ, մարում՝ շուրջ 30.8 մլրդ դրամ): Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 978.1 մլն դրամ ուղղվել է մուրհակների մարմանը և 1.7 մլն դրամ՝ պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետ գնմանը: Նախատեսված ծավալով ներգրավվել է ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից ստացված միջոցները՝ կազմելով 19.1 մլրդ դրամ: Շուրջ 35.8 մլրդ դրամով ավելացել են բյուջետային ազատ միջոցները:

Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի կողմից Աղքատության հաղթահարման աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել են 10.2 մլրդ դրամ վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարման ծախսերը կազմել են 6 մլրդ դրամ, որը հիմնականում հատկացվել է հետևյալ ուղղություններով. 2.8 մլրդ դրամ տրամադրվել է Համաշխարհային բանկի, 2.5 մլրդ դրամ՝ Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտավորությունների մարմանը, 616.8 մլն դրամ ուղղվել է ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը: